



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծիածան, 1 փող. 48,  
Հեռ. (055) 97-25-20, (098) 00 77 37  
tsiatsan.armavir@mta.gov.am

N 4  
22 հունվար 2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ներկայացնում ենք Արմավիրի մարզի Ծիածան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 1 արտահերթ նիստով հաստատված՝

<Արմավիրի մարզի Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեն>:


Առդիր < 103 > թերթ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**ՎԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կադ. Աշխարակազմի քարտուղար՝ Հ. Մանուկյան



**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՄԱՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի ավագանու 2020 թվականի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Եվ քանի որ համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմնի՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիրն է և որպես Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգում երկրորդ համակարգի բյուջե՝ այն հիմնված է ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա և ապահովում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների կատարումը:

**Համայնքի ղեկավար՝**



**Վ. Գրիգորյան**

## ՈՒՂԵՐՁ

### ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեն:

Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի հնգամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

### ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Ծիածան համայնքի 2021 թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ Ընդամենը 34286,2 հազար դրամ:

Ծիածան համայնքի 2021թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել 9506,9 հազար դրամ:

Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 24779,3 հազար դրամ:

2021 թվականին հարկերի գծով նախատեսվել է 8480,0 հազար դրամ, որից 380,0 հազար դրամ շենք. շին. գույքահարկ ( որից ապառք՝ 27,0 հազար դրամ) , 4700,0 հազար դրամ հողի հարկ ( որից ապառք՝ 524,4 հազար դրամ)և 3400.0 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ: Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է 150.0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 24779,3 հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 876,9 հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ: Նախորդ 2019 թվականի փաստացի կատարված, 2020 թվականի հաստատված և 2021թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

### ԾԱԽՍԵՐ

Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ Ընդամենը 34286,2 հազար դրամ, այդ թվում՝

Ընթացիկ ծախսերի գծով՝ 33786,2 հազար դրամ, կապիտալ ծախս՝ 500.0 հազար դրամ:



Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է (հատված 2,3, 6):

Համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2019-2020 թ.թ բյուջեի փաստացի կատարված և 2021թ. սպասվելիք ծախսերով:

### ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ  
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 22805,6 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

01բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրնսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 19278,0 հազար դրամ, որից 18778,0 հազար դրամ ընթացիկ ծախս, իսկ 500.0 հազար դրամ կապիտալ ծախս:

01բաժին 3 խումբ 3 դաս՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 28.8 հազար դրամ՝ համակարգչային ծառայությունների համար:

01բաժին 6 խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է ծախս՝ 3498,8 հազար դրամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ  
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 546,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

04բաժին 2 խումբ 1 դաս՝ «Գյուղատնտեսություն» ծրագրով նախատեսվել է ընթացիկ ծախս՝ 546,0 հազար դրամ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ  
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 996.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 996.0 հազար դրամ՝ համայնքում աղբաթափության ծրագիր իրականացնելու համար:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)  
06 ԲԱԺԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 800.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

06 բաժին 4 խումբ 1 դաս՝ «Փողոցների լուսավորում» ծրագրով 800,0 հազար դրամ:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ  
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 6105,6 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ «Մշակույթի տներ, ակումբներ» ծրագրով 5205,6 հազար դրամ:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային հիմնարկներ» ծրագրով 900.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքային նշանակության միջոցառումների գծով ծախսերը:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ  
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 3033.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ**

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 3033.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են թաղման ծախսերի մասնակի հատուցման համար, սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնության, կազմակերպություններին աջակցության և նվիրատվության համար ծախսերը: Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՅՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ  
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 0,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ**

11 բաժին 1 խումբ 2 դաս՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 500,0 հազար դրամ: 500.0 հազար դրամը ուղղվել է ֆոնդային բյուջե կապիտալ ծախսերի իրականացման համար:

Նախորդ 2019թ վականի փաստացի կատարված, 2020 թվականի հաստատված և 2021 թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դիֆիցիտի, մարման աղբյուրների, առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են ( համեմատական 2,3,4,5, 6):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> Հունվարի 2021թ.  
Ծիածան համայնք

N 2 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով.

Ավագանին որոշում է՝


1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հատվածը 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատվածը 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատվածը 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30 տոկոսը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Գևորգյան Սամվել
2. Տեր-Հովհաննիսյան Արմեն
3. Սերգոյան Մեսրոպ
4. Շավայան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

08.01.2021 թվականի  
Ծիածան համայնք



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

